

## Կարծիք

### Անի Արթուրի Թամազյանի

**«Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները»  
թեմայով**

**Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության  
վերաբերյալ**

21-րդ դարում դիվանագիտական հաղորդակցության լեզվագործաբանական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ լեզվական միջոցների ընտրությունը կարող է վճռորոշ ազդեցություն ունենալ բանակցությունների ընթացքի և դրանց արդյունքների վրա՝ նպաստելով կամ խոչընդոտելով հակամարտություն արդյունավետ կարգավորմանը: Այս հանգամանքի կարևորումը, ինչպես նաև սույն ատենախոսության շրջանակներում լեզվական միջոցների լեզվագործաբանական հատկանիշների ուսումնասիրությունը, հնարավորություն են տալիս հստակ պատկերացնել, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում օգտագործված լեզվական միավորներն ինչպես են նպաստել կամ խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունավետ կարգավորմանը: Փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել խոսույթային այնպիսի առանձնահատկություններ, որոնք հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի դիվանագիտական կարգավորման գործընթացի անարդյունավետությանը:

Ուստի Անի Թամազյանի ատենախոսության թեման արդիական է, քանի որ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում լեզվական միավորների լեզվագործաբանական և խոսքային ձևակերպումներին, դրանց կիրառմանը և դերին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի դիվանագիտական կարգավորման գործում: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից իրենց համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածության մեջ Անի Թամազյանը համառոտ կերպով անդրադառնում է աշխատանքի հիմնական բովանդակային կետին՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտության համառոտ լուսաբանմանը, ինչպես նաև ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ որպես նշված հակակամարտության խաղաղ կարգավորումը միջնորդող միջազգային կառույցի: Այս բաժնում ներկայացվում է նաև ատենախոսության թեմայի նորույթը, արդիականությունը, հիմնավորվում են հետազոտության մեթոդները, ոլորտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության սահմանափակումը և վարկածային դրույթները:

Աշխատանքն արդիական է՝ պայմանավորված դիվանագիտական հաղորդակցության գործաբանական հայեցակարգի կարևորությամբ և այս ոլորտում աճող գիտական հետաքրքրությամբ: Այս համատեքստում ԵԱՀԿ Մինսկի խմբի՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող փաստաթղթերի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս բացահայտելու դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացում:

Հետազոտության լեզվական նյութը ընդգրկում է 50 առցանց հասանելի պաշտոնական փաստաթուղթ, որոնցից 42-ը վերաբերում է Լեոնային Ղարաբաղի, իսկ 8-ը՝ Կոստվոյի հակամարտությանը:

Անի Թամազյանի հետազոտությունն ունի կիրառական արժեք, քանի որ վերլուծված նյութն ու եզրակացությունները կարող են կիրառվել լեզվագործաբանական ուղղվածության ավարտական և մագիստրոսական թեզեր, էսսեներ, գիտական հոդվածներ գրելիս, ինչպես նաև դիվանագիտական հաղորդակցության մեջ լեզվի կիրառման, տեքստի վերլուծության և մեկնաբանության գործնական դասընթացներում հատկապես հակամարտությունների կարգավորման ոլորտում լեզվագործաբանական ու խոսույթային վերլուծություններ կատարելիս:

Ատենախոսության գիտական նորույթը այն է, որ առաջին անգամ փորձ է արվում նկարագրել, վերլուծել և համեմատել ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերը խոսույթային և լեզվագործաբանական մոտեցումների տեսանկյունից: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել, թե արդյոք լեզվական միավորների ընտրությունը և խոսույթային

ռազմավարությունները կարող են նպաստել Լեռնային Ղարաբաղում խաղաղ կարգավորման ձախողմանը, որը նոր պատկերացում է տալիս դիվանագիտության մեջ լեզվի ռազմավարական դերի մասին:

Ատենախոսության առաջին գլուխը, որը վերնագրված է «Դիվանագիտական խոսույթի վերլուծության տեսական մոտեցումները» անդրադառնում է խոսույթի ընդհանուր բնութագրին, տարբերակում դիվանագիտական խոսույթը քաղաքական խոսույթից, ուսումնասիրում դիվանագիտական խոսույթի լեզվագործաբանական առանձնահատկությունները: Ատենախոսի կողմից բոլոր տեսությունների ինտեգրումն աշխատանքում, հղումները Ջ. Սըրլի, Է. Սեթուի, Թ. Ա. վան Դեյքի, Գ. Քուքի, Մ. Ֆուկոյի, Գ. Յուլի տեսություններին, ինչպես նաև միջազգային և ազգային լեզվաբանական հետազոտություններին, բարձրացնում են ներկայացված նյութի ուսումնասիրության համակողմանիությունը: Հետազոտության առարկայից ելնելով՝ դասակարգվում են դիվանագիտական փաստաթղթերի տարբեր տեսակները և վերջիններիս լեզվաբանական առանձնահատկությունները: Այստեղ ընդգծվում է լեզվի կարևոր դերը դիվանագիտության մեջ: Անդրադարձ է կատարվում ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի կառուցվածքին, ինչպես նաև անգլերենի միջնորդ դերին՝ այդ կառուցվածքն ապահովելու գործում: Հարկ է նշել, որ այս գլխում դիտարկվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի զեկույցների և հայտարարությունների վերլուծության համար անհրաժեշտ երեք լեզվագործաբանական գործիք. խոսքային ակտը, ցուցայնությունը (deixis) և կանխենթադրույթը, մասնավորապես կանխենթադրույթի խթանները (presupposition triggers), որոնք կարևոր տեսական և գործնական նշանակություն ունեն դիվանագիտական խոսույթի վերլուծության համատեքստում: Այսպիսով, ստեղծվում է տեսական շրջանակ, որն ապահովում է հստակություն և տրամաբանականություն ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի հետագա վերլուծությունների համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների և զեկույցների պարտվոզական խոսույթը՝ որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարտության պատճառ», ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական ուղղվածություն: Վեր

է հանվում պարտվողական խոսույթ հասկացությունը, հատկապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերում:

Ատենախոսության հեղինակը հիմնվում է փաստական տվյալների վրա՝ ուսումնասիրելով, թե ինչպես են լեզվաբանական գործոնները, մասնավորապես երկակիության և զգուշավորության դրսևորումները ձևավորել միջազգային ընկալումները և ազդել հակամարտության կարգավորման վրա:

Ուշադրություն է դարձվում երկակիության կիրառմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում և նշվում է, որ երկակիությունը, թեև կարող է նպաստել դիվանագիտական ճկունությանը, սակայն հաճախ դառնում է անորոշության և պատասխանատվությունից խուսափելու գործիք, որը դանդաղեցնում է հակամարտության կարգավորման գործընթացը: Հեղինակը վերլուծում է տարբեր տարիների (2009, 2016, 2017, 2021) 16 փաստաթուղթ, որոնք պարունակում են բառային, շարահյուսական և գործաբանական երկիմաստություն արտահայտող միավորներ:

Ա. Թամազյանը այս գլխում նաև իրականացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարություններում առկա տոնայնության վերլուծությանը:

Այս գլուխը կարևոր է, քանի որ այն ոչ միայն բացահայտում է պարտվողական խոսույթի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները, այլև առաջարկում է մեթոդաբանություն, որը կարող է կիրառվել դիվանագիտական այլ փաստաթղթերի վերլուծության մեջ: Հեղինակը ցույց է տալիս, որ լեզվական ձևակերպումները կարող են ազդել քաղաքական գործընթացների վրա, իսկ դրանց ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես կարելի է բարելավել դիվանագիտական խոսույթը հակամարտությունների կարգավորման համատեքստում:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունների փաստաթղթերի համեմատական լեզվագործաբանական վերլուծություն», նվիրված է երկու հակամարտություններին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերի լեզվագործաբանական վերլուծության փորձառական և մեթոդական հիմունքներին, որը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումով: Այս գլուխն

առանձնանում է մի շարք առանձնահատկություններով, որոնք բարձրացնում են հետազոտության գիտական և կիրառական արժեքը:

Սույն գլուխը ունի կիրառական ուղղվածություն և հիմնված է համեմատական վերլուծության վրա, որը թույլ է տալիս ատենախոսին բացահայտել, թե ինչպես են Կոսովոյի և Լեոնային Ղարաբաղի հակամարտություններին վերաբերող դիվանագիտական փաստաթղթերում կիրառվող լեզվագործաբանական միջոցները՝ խոսքային ակտը, կանխենթադրույթը, ցուցայնությունը և գործաբանական ցուցիչը, ձևավորում քաղաքական պատումներ (narratives) և ազդում հակամարտությունների ելքի վրա:

Խոսքային ակտերի համեմատական վերլուծության միջոցով ատենախոսը բացահայտում է, թե ինչպես են հայտարարական և պերլոկուտիվ ակտերը տարբեր ազդեցություն ունեցել հակամարտությունների դինամիկայի վրա: Հեղինակը հիմնավորում է, որ լեզվագործաբանական միջոցների ռազմավարական կիրառումը կարող է խթանել կամ, հակառակը, սահմանափակել խաղաղ գործընթացները:

Գլխում կարևոր տեղ է զբաղեցնում նաև կանխենթադրույթի և ցուցայնության դրսևորման վերլուծությունը, որն ընդգծում է, թե ինչպես են անձնական, ժամանակային, տարածական, խոսույթային և սոցիալական ցուցայնությունները ձևավորում հեղինակություն և դիվանագիտական ազդեցություն:

Այս գլուխն անդրադառնում է նաև գործաբանական ցուցիչների համեմատական վերլուծությանը՝ ցույց տալով, թե ինչպես են դրանք ձևավորում դիվանագիտական տեքստերի տոնայնությունը և ազդեցությունը:

Անկասկած, փաստաթղթերի համեմատական վերլուծության արդյունքների ներկայացումը ատենախոսության կարևորագույն ձեռքբերումներից է: Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես կարող են լեզվագործաբանական ռազմավարությունները նպաստել կամ խոչընդոտել հակամարտությունների կարգավորմանը, ինչպես նաև ձևավորել միջազգային դիվանագիտական գործընթացների հաջողության հիմքերը:

Ատենախոսության երրորդ գլխի եզրակացությունները լիովին ամփոփում են կատարված աշխատանքը՝ ընդգծելով, որ լեզուն ոչ միայն հաղորդակցման գործիք է, այլև կարևոր

ռազմավարական միջոց՝ հակամարտությունների դիվանագիտական կարգավորման գործընթացներում:

Ատենախոսության գրականության ցանկը ներառում է 147 անուն հիմնական աղբյուր՝ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան, որոնք ներկայացված են մենագրությունների, գիտական հոդվածների, ինչպես նաև առցանց և տպագիր այլ հրապարակումների ձևով: Այս աղբյուրները հրապարակված են միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում և միջազգային գիտաժողովների ժողովածուներում՝ ապահովելով թեմայի համակողմանի վերլուծություն և հետազոտության խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեսական և գործնական հիմքեր:

Անի Թամազյանի ատենախոսության եզրակացությունները լիարժեքորեն ամփոփում են իրականացված հետազոտական աշխատանքը՝ ընդգծելով դրա կարևորությունը և գիտական արժեքը:

Ատենախոսության հավելվածները կարևոր դեր են խաղում՝ ապահովելով հետազոտության ամբողջականությունն ու գործնական կիրառելիությունը:

Ատենախոսական աշխատանքում կիրառված աղյուսակներն ու գրաֆիկական պատկերները նպաստում են բարդ տեղեկատվության ավելի դյուրին և հասկանալի ներկայացմանը՝ տեսողականորեն ընդգծելով հետազոտության հիմնական միտումները, հարաբերությունները և գործընթացները: Դրանք ոչ միայն աջակցում են ուսումնասիրվող երևույթների խոր ընկալմանը, այլև ուժեղացնում են փաստարկների հստակությունը՝ դարձնելով եզրակացությունները ավելի հիմնավորված և համոզիչ:

Ատենախոսությունը արժեքավոր ներդրում է ժամանակակից լեզվաբանության ոլորտում, քանի որ այն ընդգծում է լեզվի ռազմավարական դերը դիվանագիտության մեջ՝ բացահայտելով դրա կարևորությունը որպես արդյունավետ հաղորդակցման և ներազդման գործիք:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված 6 հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները:

Հեղինակի կողմից կատարված հետազոտությունը շարադրված է գրագետ, գիտական լեզվով: Այն հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության

հիմնադրույթների գերակշիռ մասը պարունակում է որոշակի գիտական նորույթ և հիմնավորված նոր մոտեցումներ: Կարելի է նշել, որ Անի Թամազյանը լիովին կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր կերպով ներկայացնելով թեմային առնչվող տեսական և գործնական նյութը:

Ընդհանուր առմամբ, բարձր գնահատելով ատենախոսի կատարած մեծածավալ ուսումնասիրությունը, կցանկանայի խոսել մի քանի նկատառումների մասին.

1. Նկատվում են նաև մի քանի վրիպում, մասնավորապես.

Ատենախոսության 7-րդ էջում ատենախոսը հղում է կատարում Էրնեստ Սեթոուին (Eenest Satow) և որպես աղբյուրի հրատարակման տարեթիվ տեքստում նշում 1917 թվականը, սակայն գրականության ցանկում նշյալ հեղինակը այդ տարեթիվը հրապարակում չունի: Բացի այդ առկա է որոշ անհամապատասխանություն աղբյուրների ձևակերպման կարգում, տե՛ս գրականության ցանկ կետ 83 և 106: Առկա է նաև <. Թովմասյանի տեքստում և գրականության ցանկում նշված աղբյուրի տարեթվերի անհամապատասխանություն, սխալ է նշված նաև ժողովածուի անվանումը, որում լույս է տեսել այդ հրապարակումը: Էջ 21-ում important բառի փոխարեն նշված է impornat: Էջ 21-ում 3 անգամ pragmatic marker փոխարեն նշված է pragmatic maker: Էջ 14-ում նկատվում է անորոշ հոդի սխալ օգտագործում. an perception ձևակերպումը պետք է լիներ a perception, քանի որ «perception» բառը սկսվում է բաղաձայնով: Սեղմագրում «չնայած իրենց կարևորությանը, չեն դիտարկվել» (էջ 3) արտահայտությունն ավելի ակադեմիական դարձնելու նպատակով կարելի էր ձևակերպել՝ «չնայած կարևորությանը՝ չեն դիտարկվել»: Էջ 16-ում according to կապակցությամբ հատվածը նախադասության մնացած հատվածից պետք է առանձնանար ստորակետերով:

2. Տեքստում առկա հղումների որոշ մասում բացակայում է հղման էջը, որը նշյալ մեջբերումների դեպքում պարտադիր է, մասնավորապես էջ 11, 12, 36, 37, 39, 48, 53 և այլն:

3. Որոշ դեպքերում ատենախոսի կողմից մեջբերման տեքստում ավելացված են դիվանագիտությանը վերաբերող տարրեր, որոնք բնագրում առկա չեն, տե՛ս էջ 39, 40:

4. Ատենախոսության թեմայի շրջանակում հիմնաքարային համարվող գործաբանական իրողությունների՝ խոսույթ, խոսքային ակտ, կանխենթադրույն և այլն, հիմնարար գրականությունը արդի չէ: Անշուշտ այդ գրականությունը հիմնարար է, սակայն անհրաժեշտ է դա համարել արդի գիտական մտքով: Այլ դեպքում նկատվում է հակառակը. առկա է նորը, բացակայում է հիմնարարը, օրինակ՝ ցուցայնությանը վերաբերող գրականությունը:

5. Առաջին գլխում ցանկալի կլիներ տեսնել լեզվական նյութի ավելի շատ վերլուծություն, որը առաջ քաշած հիմնադրույթներն ավելի ապացուցելի և հիմնավորված կդարձներ:

6. Թեմայի գաղափարական հենքը դիվանագիտական խողովակով հակամարտությունների կարգավորումն է: Ըստ այդմ՝ ցանկալի կլիներ թե՛ տեսական, թե՛ գործնական հատվածներում արտացոլել գործաբանության հենք հանդիսացող նպատակադրման/դիտավորության (intentionality) տեսության հիմախնդիրները և դրանց առկայացումը քննվող նյութի շրջանակում:

7. Դիվանագիտական նպատակների իրականացման, հաջողության/ անհաջողության համար համատեքստում կանխենթադրույթի քննությունը պահանջում է դրա տեսակների վերհանում և յուրաքանչյուր դեպքում որոշակի տեսակի կանխենթադրույթի և դրա կատարած դերի դուրսբերում: Նույնը վերագրելի է նաև կանխենթադրույթի խթանների տեսակներին:

8. Բացի այդ, գործաբանության դիրքերից ելնելով և դիվանագիտական արդյունքի տեսանկյունից, առանցքային կլիներ ներակայվածքի քննությունը և դրա կատարած դերի վերհանումը հակամարտության հանգուցալուծման գործում:

Չնայած նշված դիտարկումներին՝ Անի Արթուրի Թամազյանն իր թեկնածուական ատենախոսությունը շարադրել է գիտական պատշաճ լեզվով, հասկացական գործիքակազմի պահպանմամբ և ճշգրիտ օգտագործմամբ: Աշխատանքի ձևավորումը, բովանդակությունը, ստացված արդյունքները լիարժեքորեն բավարարում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Լեոնայինս Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի փաստաթղթերի խոսույթային և լեզվագործաբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակը՝ Անի Արթուրի Թամազյանն արժանի է հայցած՝ Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

Խորացված անգլերենի ամբիոնի վարիչի պաշտոնակատար,

բ.գ.դ., պրոֆեսոր

Հրանուշ Ժորայի Թովմասյան

Հ. Թովմասյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

գիտական քարտուղար, տ.գ.թ., դոցենտ

10.02.2025թ.



Ծաղիկ Ստեփանի Հովհաննիսյան